Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱԼՖՐԵԴ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԵՎ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՍՏՂԻԿ ՄԱՐԱԲՅԱՆԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Գործուղված անձինք

   Ալֆրեդ Քոչարյան

   Աստղիկ Մարաբյան

2. Զբաղեցրած պաշտոնը

   ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ

   ՀՀ ԿԳՄՍՆ մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները

   Արաբական Միացյալ Էմիրություններ, Շարժա, մարտի 9-12, 2022

4. Հրավիրող կողմը

   Շարժայի ժառանգության ինստիտուտ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

   - *«Շարժայի ժառանգության օրեր» ամենամյա փառատոնի շրջանակում հայկական տաղավարի համակարգում և պաշտոնական բացման մասնակցության ապահովում.*
   - *հայկական մշակութային ժառանգության միջազգայնացում, միջմշակութային երկխոսության ընդլայնում:*

6. Քննարկված թեմաները.

   - *«Շարժայի ժառանգության օրեր» ամենամյա փառատոնի շրջանակում հայկական տաղավարի համակարգում, պաշտոնական բացման մասնակցության ապահովում.*
   - *Շարժայի ժառանգության ինստիտուտի հետ համագործակցության ընդլայնում*
   - *Մշակութային ժառանգության ոլորտում համատեղ ծրագրերի իրականացում.*

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

«Շարժայի ժառնագության օրեր» փառատոնի պաշտոնական բացում
մարտի 10, 2022

2022 թ. մարտի 10-ին տեղի ունեցավ «Շարժայի ժառանգության օրեր» ամենամյա փառատոնի պաշտոնական բացումը, որին Հայաստանը պատվավոր հյուրի կարգավիճակով մասնակցում էր առանձին տաղավարով: Հայկական տաղավարի 12 սրահներում ներկայացված էին հայկական մշակութային ժառանգության բազմաբնույթ դրսևորումները՝ ձեռագրարվեստ ու մանրանկարչություն, երաժշտություն ու ժողովրդական արհեստներ, այդ թվում՝ գորգագործություն, ասեղնագործություն, ժանեկագործություն, փայտագործություն, խաչքարագործություն, տիկնիկագործություն և հայկական տարազ: Ցուցադրությունն ուղեկցվում էր հայկական երգի ու պարի, ինչպես նաև նվագարանային անսամբլների կատարումներով:

Փառատոնի պաշտոնական բացման շրջանակում Շարժայի պաշտոնատար անձանց պատվիրակությունը՝ Նորին Գերազանցություն շեյխ Աբդուլլահ բին Սալեմ բին Սուլթան Ալ Քասիմիի գլխավորությամբ այցելեց հայկական տաղավար: Բարձրաստիճան հյուրերը հայկական պատվիրակության ղեկավար ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանի, ինչպես նաև ԱՄԷ-ում ՀՀ գործերի հավատարմատար Կարեն Գրիգորյանի և ԱՄԷ-ի ու Կատարի թեմի առաջնորդ Տեր Մեսրոպ եպիսկոպոս Սարգսյանի ուղեկցությամբ շրջեցին հայկական տաղավարում:
Փառատոնը կտևի մինչև մարտի 28-ը:

Հանդիպում Շարժայի ժառանգության ինստիտուտի տնօրենի հետ
մարտի 11, 2022.

Շարժայի ժառանգության ինստիտուտի տնօրեն Նորին Գերազանցություն դոկտոր Աբդուլազիզ Ալ Մուսալլամի հետ պաշտոնական հանդիպման շրջանակում քննարկվեցին փորձի փոխանակման և համատեղ նախագծերի իրականացման, ինստիտուցիոնալ համագործակցության ընդլայնման, երկու երկրներում իրականացվող ծրագրերի մասնակցության ապահովման հնարավորությունները:
Համագործակցության հետագա զարգացման համատեքստում կարևորվեց փոխադարձ այցի կազմակերպումը Հայաստանի Հանրապետություն:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

- *Պայմանավորվածություն ձեռք բերվեց առաջիկայում կազմակերպել Հայաստանի պատմության թանգարանի և Շարժայի ժառանգության ինստիտուտի միջև փոխըմբռնման հուշագրի ստորագրումը,*
- *Որոշվեց ընդլայնել համագործակցության շրջանակը մշակութային ժառանգության ոլորտում.*
- *Կազմակերպել փոխադարձ այց Հայաստանի Հանրապետություն:*

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվում է կազմակերպել Արաբական Միացյալ Էմիրությունների պատվիրակության փոխադարձ այցը Հայաստանի Հանրապետություն համագործակցության հետագա զարգացման ապահովման նպատակով:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Մարտի 15, 2022

Ալֆրեդ Քոչարյան

Աստղիկ Մարաբյան